

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

### Միրելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաբուղբը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ք X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ծ:

- 1) թյուրիմա-ություն, կ-կվել, փայ-աղ, կո-կել
- 2) կեցվա-ք, ծա-կոց, մազապուր-, լուսկյա-
- 3) կատարա-ու, գլուխկոն-ի, ցն-ություն, վեհապան-
- 4) խավարամա-, ատաղ-ագործ, անե-ք, թխվա-ք

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում մ:

- 1) ա-բասիր, գա-փո, շա-բուտ, ա-բարձիչ
- 2) ա-բարիշտ, ա-պազողողող, ա-բաստանել, սուսա-բար
- 3) ա-փոփել, հա-բավ, ա-բարտավան, հա-պատրաստից
- 4) կշտա-բել, ա-պաճույճ, ա-բարտակ, ս-բակ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձների) վերջին վանկն է շեշտվում:

- 1) անդրաշխարհ, ութերորդ, գլուխ տալ
- 2) ծանրություն, մեծ-մեծ, Պուշկինի
- 3) կարծր, ի դեպ, արագընթաց
- 4) դրամարկղեր, թրիսկոց, կարծես թե

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) ալյակ, կարեվեր, ընձուղտ, մանրանկար
- 2) գարնանային, խճուղի, մեղրամոմ, խորազնին
- 3) ընտանեկան, հոգատար, ընչաքաղ, ալրադաց
- 4) ուրվական, աղավնյակ, ուխտադրուժ, ցրտահար

5 Ո՞ր շարքի բոլոր բառերում բաց վանկ կա:

- 1) հաղթահանդես, աջհամբույր
- 2) շերտավոր, պսպղուն
- 3) ենթարկվել, երկրապահ
- 4) բնաշխարհ, ընտրարշավ

6

Ո՞ր տարրերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ՎԽԳ-2033
- 2) ՑԶԶ-6806
- 3) ՄՀԲ-262
- 4) ՆԾԹ-459

7

Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:

- 1) ‘Դու շատ լավ գիտես՝ ստեր չեմ հանդուրժի:
- 2) Եթե նա այս անգամ էլ ստեր, հայրն արդեն չէր ների:
- 3) Քեզնից ստեր շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
- 4) Ստեր տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:

8

Ո՞ր տարրերակում է գորդյան հանգույցը կտրել դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:

- 1) լուծել դժվարին, խճճված խնդիրը
- 2) պարզաբանել հարաբերությունները
- 3) հեռանալ բարեկամներից
- 4) ենթարկվել դաժան դատաստանի

9

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) եկեղեցի, դաշույն, մահակ
- 2) բուք, մետաքս, կարիք
- 3) ամբիոն, հասուն, դանակ
- 4) հավաք, ծորակ, փափուկ

10

Ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանեցված տրված բառերն իրենց բացատրություններին:

- ա. տատասկ  
բ. հյուլե  
գ. սկահակ  
դ. բալասան  
ե. խորշակ

1. տաք քամի  
2. զանազան ծաղիկներից ստացվող բուժիչ հյութ  
3. վշշոտ տերևներով խոտարույս  
4. նվազագույն մասնիկ

- 1) ա-3, զ-1, դ-2, ե-4
- 2) ա-2, բ-1, դ-4, ե-3
- 3) ա-2, բ-4, զ-3, ե-1
- 4) ա-3, բ-4, դ-2, ե-1

**11** Ո՞ր տարրերակի երկու բառերում էլ անկախ գործածություն *չունեցող* արմատներ կան:

- 1) դռնփակ, փառասեր
- 2) ծայրահեղ, դերասան
- 3) արնաներկ, ակնաբույժ
- 4) վշտալուկ, խնկածաղիկ

**12** Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:

- 1) բարեխառն, կորամեջք, աչագեղ, քաջազուն
- 2) խճաքար, որմնաղիր, որդեսեր, հնավանդ
- 3) ազեվազ, գյուղեգյուղ, ծանրաշարժ, արևավառ
- 4) հորդաբուխ, ալեհույզ, կաթնասուն, գետնանուշ

**13** Ո՞ր շարքում վահովման ենթարկվող բառ չկա:

- 1) կեսօր, դար, աշուն, հազարամյակ
- 2) մարտ, բոպե, զիշեր, հիմա
- 3) վաղորդայն, երեկ, ազգանուն, ցայզ
- 4) կիրակի, երեկո, ամանոր, վայրկյան

**14** Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ:

- 1) խմբագիր, կցակար, գինետուն, տոնածառ
- 2) գանձարկղ, կողաքն, թոշնաբույժ, միջնապատ
- 3) դուստր, օրհներգ, պահանջատեր, ուղեցույց
- 4) անասնակեր, ոտնաշափ, մորաքույր, ստեղնաշար

**15** Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գերադրական աստիճանով դրված ածականներ են:

1. ամենակեր, 2. նվազագույն, 3. մեծամեծ, 4. ամենատես, 5. խոշորագույն,
6. ամենագետ, 7. ամենահզոր, 8. ազնվագույն:

- 1) 2, 3, 4, 7, 8
- 2) 1, 3, 4, 5, 7
- 3) 1, 2, 5, 8
- 4) 2, 5, 7, 8

16

Ո՞ր նախադասության մեջ դերբայի կամ ձևաբայի (կախյալ դերբայի) սխալ ձև չկա:

- 1) Զրից փախնողը հայտնվեց կրակի մեջ:
- 2) Զգում էր, որ կորելու է նաև տիկնոջ վերջին հույսը:
- 3) Տնային ծաղիկներ աճացնելը այնքան էլ հեշտ գործ չէ:
- 4) Այդ շաղակրատը ամեն տեղ էլ խոսած կլինի մեր մասին:

17

Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք դերանուններ են.

1. ամենայն, 2. մյուս, 3. ոչ, 4. ամենին, 5. ուրիշ, 6. երբեմ, 7. ինքնին, 8. քանից,  
9. այսին:

- 1) 2, 4, 5, 6, 8
- 2) 1, 2, 5, 6, 9
- 3) 1, 3, 5, 7, 9
- 4) 2, 3, 4, 7, 8

18

Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):

- 1) կանգնել, կառչել, կտրտել, խրտնել
- 2) կառուցել, դիպչել, լուսավորել, փնտրել
- 3) սահմանազատել, մթնել, մարտնչել, վազվել
- 4) զբոսնել, ժանգոտել, գտնել, հոգնել

19

Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:
- 2) Պատասխան տուր ինձ, մատնի՛չ սեաչյա, Մի՞թե Թաթովը քաջ չէր ու սիրուն...
- 3) Ամենահասարակ հարցն անգամ չկարողացավ ինքնուրույն լուծել:
- 4) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:

20

Ո՞ր տարրերակում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Նայում ես կյանքիդ անցած ճանապարհիմ, երբ ծանր են եղել թերեւ կարիները,  
երբ ձյունը նստել է ոչ թե զլիիդ, այլ վշտամորմոք հոգուդ վրա, բոլոր տեսած ու  
չտեսած անուրջներիդ վրա:

- 1) նայում ես -անկատար ներկա, պարզ ժամանակաձև, **հոգուդ** -ստացական հողով  
գոյական
- 2) անցած -կանոնավոր բայ, հարակատար դերբայ, **թերեւ** -ձևի մակրայ
- 3) բոլոր -որոշյալ դերանուն, **եղել են** -անկանոն բայ, չեզոք սեռ
- 4) ոչ թե -ստորադասական շաղկապ, **ձյունը -ա** ներքին հոլովում, ուղղական հոլով

21

Ո՞ր նախադասության դիմաց է տեսակը սխալ նշված:

- 1) Սոռացված երազնե՞ր, շուշաննե՞ր թառամած... (*միակազմ, անվանական անդեմ*)
- 2) Սենյակում չաղմկել: (*միակազմ, բայական անդեմ*)
- 3) Ինձ չեք հասկանում: (*երկկազմ, համառոտ*)
- 4) Անընդհատ դժգոհում է: (*թերի, ընդարձակ*)

22

Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:


*Ինչպես էր ընկել այդ ամայի վայրը`.....*

- 1) այդպես էլ դժվարանում էր պատասխանել:
- 2) չէ՞ որ չեր հիշում, թե մինչ այդ որտեղ էր եղել:
- 3) որ չեր նկատել ճանապարհից շեղվելը:
- 4) այդ նույն ճանապարհով էլ դուրս պիտի գար:

23

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Նա տեսել էր ավագակների, որոնք տաճարների դռներմ էին համրուրում և բարեպաշտ հոչակվում, հարստահարողների, որոնք Աստծու սեղանի կանքեղի մեջ յուղ էին լցնում, մոլաների, որոնք այդ բոլոր մարդկանց օրինում էին՝ նրանց բարեպաշտ հոչակելով և Աստծու պաշտամունքը նրանց ծառայեցնելով:



24

**Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Այստեղ է լացել իմ մայրը  
Մորմոքն իր և իր օրորը,  
Այստեղ այնպես անծայր է  
Թախիծը և այնպես խոր է:
- 2) Թանապորի տաք գոլորշին  
Գերանին առնում  
Եվ այունն ի վար գլոր-գլոր  
Ուզունք էր դառնում:
- 3) Սիրո հակառակը ամենենին էլ չսիրելը չէ...
- 4) Երկի բան է պատահել.  
Երկի տարիներն անսիրտ  
Իմ սրտի կրակը տարել,  
Տարել են ու հետ չեն բերել...

25

**Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ  
փոխակերպված պարզ (դերբայական դարձվածով) նախադասության:**

*Այնտեղ էր նաև Օհանը՝ այդ ծերունին, որ աշխարհի չարն ու բարին տեսել էր,  
սեփական փորձով հարստացել:*

- 1) Այնտեղ էր նաև աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով  
հարստացած ծերունին՝ Օհանը:
- 2) Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած և սեփական փորձով  
հարստացած ծերունին:
- 3) Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով  
հարստացած այդ ծերունին:
- 4) Այնտեղ էր նաև աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով  
հարստացած Օհանը՝ այդ ծերունին:

26

**Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված հատկացոցի:**

- 1) Բարձր լեռների հսկայական շրջանակի մեջ երևում էր ընդարձակ դաշտավայրը:
- 2) Քո երգելու ժամանակ դահլիճը հմայված ունկնդրում էր:
- 3) Գազանների հետ հացի կնատեմ, ողջունը կառնեմ քորենիների:
- 4) Վերջապես մոտեցանք մի շենքի, որ չորս կողմից պատված էր աշտարակավոր  
պարսպով:

27

**Ո՞ր տարրերակում պատճառի պարագա չկա:**

- 1) Շտապելուց քև են առել, Դարձել թեթև թիթեռներ...
- 2) Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր Կախվել մեր զլիսին այսպես կուրորեն:
- 3) Ոտքերս թրջվել էին հորդ անձրևից:
- 4) Իսկ զմվելուց չէ՞ փայտը ճարճատում...

28

**Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Բոլորը հոգնատանց էին և ամեն ինչից երևում էր արագաերթ էին կտրել երկարուժիք ճանապարհը:
- 2) Նույնիսկ քսան տարի անց ոչ մի մասնագետ չէր համարձակվում ձեռնամուխ լինել այդ դժվարին գործին դա նրանց ուժերից վեր էր:
- 3) Զարմանում եմ ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
- 4) Թուղթը վերցնելու համար նա խոնարհվեց և միևնույն ժամանակ մի գողունի հայացք ձգեց վրաս տեսնելու դեռ նայում եմ արդյոք իր վրա:

29

**Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մինչև պարանոցը ջրի մեջ կանգնած է Տանտալոսը: Իսկ զլիսավերևում հասուն մրգերով ծանրաբեռնված ծառի ճյուղեր են:
2. Մի օր նա կասկածեց աստվածներին և ցանկացավ ստուգել նրանց ամենազոր լինելը, որի համար խիստ պատժվեց: Նրան զցեցին ստորերկրյա խավար աշխարհը, որտեղ նա տաճաշվում էր քաղցից ու ծարավից:
3. Ըստ հունական դիցաբանության՝ Տանտալոսը Փոյուգիայի թագավորն էր: Նա վայելում էր Զևսի և բոլոր աստվածների սերն ու համակրանքը:
4. Երբ ձգվում է՝ միրգը պոկելու, ճյուղերը վեր են բարձրանում, իսկ երբ կուանում է՝ զուր խմելու, ջրերը ցած են իջնում: Այսպես նա դատապարտված է հավիտենական տանջանքի:

- 1) 1, 4, 2, 3
- 2) 1, 3, 4, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

30

**Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

*Բաց արակ ցերեկն իր աչքը պայծառ  
Աշխարհի վրա, Զավախիքի վրա.  
Ավերակ բերդին սև ամպի նման  
Ծոլիսն ու թշնամին չոքել են ահա:*

- 1) չափազանցություն
- 2) անձնավորում
- 3) մակդիր
- 4) շրջադասություն

31

**«Սասնա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսի խոսքն է.**

*Որ աշխարհը ավերվի, մեկ էլ շինվի,  
Երոր ցորեն էղակ քանց մասուր մի,  
Ու գարիմ էղակ քանց ընկուր մի,  
Էմ ժամանակ հրամանը կա, որ էլնենք էղտեղեն:*

- 1) Փոքր Սիերի
- 2) Սեծ Սիերի
- 3) Քեռի Թորոսի
- 4) Դավթի

32

**Ո՞ր տողը Մ. Մեծարենցի «Սիրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին») բանաստեղծությունից չէ:**

- 1) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի-
- 2) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
- 3) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով
- 4) Համբույրիդ, գիշեր, պատոհանս է բաց

33

**Նախադասությունները նշող բվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում «Արու-Լալա Մահարի» պոեմի տողերի ճիշտ հաջորդականությանը:**

1. Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ և թոքովում են հնչյուններն անմահ
2. Ազգեր են եկել, ազգեր գնացել և չեն ըմբոնել իմաստը նրա
3. Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով
4. Եվ ո՞վ է հյուսել հերիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով

- 1) 4, 3, 1, 2
- 2) 3, 4, 1, 2
- 3) 4, 3, 2, 1
- 4) 3, 4, 2, 1

34

**Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է պատասխանում Վարդան Մամիկոնյանը Աթոլի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:**

- 1) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթոլի՝ իր հետևից բողած սովը;
- 2) Նկատելով բյուզանդացի գորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրել՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատքարացումից:
- 3) Սիրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
- 4) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:

35

**Ո՞ր շարքի բոլոր գրողներն են սիյուռքահայ:**

- 1) Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապետ, Սիամանթո
- 2) Համաստեղ, Հակոբ Մնանյան, Մուշեղ Իշխան
- 3) Կոստան Զարյան, Վահագն Դավթյան, Հակոբ Օշական
- 4) Վազգեն Շուշանյան, Դանիել Վարուժան, Վահան Թերեյան

36

**Ութողանի բանաստեղծությունը, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ, կոչվում է՝**

- 1) տրիոլետ
- 2) հայրեն
- 3) սոնետ
- 4) գաղել

37

**Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեին:**

- 1) Շահի ուղարկած պատվիրակությունը մեծամեծ ընծաներով կարողանում է համոզել Թմկա տիրուհուն բացել բերդի դռները:
- 2) Շահը Թմուկ բերդը գրավում է Թաթուլի կնոջ մատնությամբ:
- 3) Շահին հավատացնում են, որ Թմկա տիրուհու սրտին տիրելու դեպքում Թաթուլը անզոր կլինի նրա առաջ:
- 4) Թմկա տիրուհին հարբեցնում է Թաթուլին և նրա հաղթական զորքին ու թշնամու առաջ բացում բերդի դռները:

38

**Հ. Ծիրազի ո՞ր ստեղծագործության բովանդակության խտացումն է հետևյալ տողը.**

«Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում»:

- 1) «Կուզեի նստել մի քարի վրա»
- 2) «Հայ ժողովրդի երգը»
- 3) «Մայրս փոքրիկ»
- 4) «Բիբլիական»

39

**Ե. Զարենցի ստեղծագործություններից քանիսի՝ վերնագիրն է սխալ նշված:**

- Հեռո՞ւ, մոտիկ ընկերներին,-աշխարհներին, արևներին,-  
Հրանման հոգիներին:-  
Բոլո՞ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ-  
Բոլո՞ր նրանց հոգիներին արևավառ:-  
*«Ամրոխները խելագարված»*
- Չե՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,  
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ  
Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին:  
*«Մահվան տեսիլ»*
- Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,  
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում...  
*«Գանգրահեր տղան»*
- Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,  
Ու սուս թվա իմ հոգուն քո կարոտը սրբազնան...  
- Ի՞նչ էլ լինի, քո՞ւյր իմ, քո՞ւյր, հեռանալիս չանիծե՞ս  
Խե՞նճ կարոտը թներիս, որ երբե՞ք քեզ չհասան:  
*«Հեռացումի խոսքեր»*

40

**Տրված շարքերից քանիսի՝ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը:**

- կ-տար, դժո-ք, ա-ճատել, տա-տակամած
- գեղ-ուկ, զղ-ալ, անզի-ում, ստեր-
- թա-ցնել, տարեր-, լայնափող-, դիցու-
- խարիսա-ել, ջրար-ի, եր-ներանգ, հա-շտակել
- խր-վիլակ, զար-ուղի, աղո-ք, ճ-քավոր

41

**Բառերից քանիսի՝ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ունք* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

պարապություն, ծաղկավաճառ, բուրավետ, մասնագետ, կնամեծար, գարնանացան, զգայարան, երկարատև, բարձրատոհմիկ:

42

## Տրված հատվածում քանի՞ կապ կա:

Չորս հոգևորական պատրիարքի գլխի վրա ամպհովանի բռնեցին: Բոլորի առջևից մի մարդ էր գնում՝ պարզած ձեռքերի մեջ ինչ-որ բան բերելով. Գրիգոր Լուսավորչի աջն էր: Խոր լուրջունը խախտեցին խելահեղ բացականչությունները. իհնա արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել ուխտավորներին: Նրանք նետվեցին առաջ: Դողդոցուն ձեռքեր պարզվեցին դեպի Լուսավորչի աջը: Երկու վաճականներ որպես պահապան հրեշտակներ պահում էին այն:

43

## Ընդգծվածներից քանի՞սը դերքայական դարձված չեն (նախադասությունները կետադրված չեն):

- Գնացքի շոգեկառքը զարդարված էր փողփողացող ալ դրոշներով:
- Անհայտ հեռուներից մինչև նահրյան այդ քաղաքը ձգվող երկարեն գծերի վրայով գնացքը մոտենում էր կայարանին:
- Դա մի մեծ հյուրասրահ էր կահավորված քանկարժեք իրերով:
- Խոնարհվելով քարեւել սովորություն էր դարձրել:
- Զիավորը շուր գալով նկատեց հետապնդողներին:

44

## Նախադասություններից քանիս՞ն կետադրական սխալ կա:

- Թագավորն էր. իրեղեն ձին նստած, ահագին փայլուն թուրը քաշած, եկավ և խրոխտ կանգնեց դաշտի մեջտեղում:
- Տղան սպասում էր հիվանդի հրամաններին և նրան թվում էր, թե պատրաստ է ծերունու մի խոսքով կրակի մեջ նետվելու:
- Քանաստեղծը ցավով ու տառապանքով գրեց «Երկիր Նահրին»՝ հայրենիքի ճակատագրին նվիրված մի գիրք՝ լի խորը բախիծով:
- Շապուհը՝ պարսից երկարակյաց շահը, հասցրել էր փորձել հայոց չորս թագավորներին և համոզվել, որ հայոց արքաների բյուզանդական կայսրերի հետ ունեցած մտերմության գլխավոր կովաններից մեկը կրոնն է, մյուսը՝ մշակույթը:

45

## Նշել այն հատուկ անունների համարները, որոնց միայն առաջին քաղադրիչն է գրվում մեծատառով.

1. ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2. ՍՈՂՈՍՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ,
3. ՊՈՂՈՍ ԱՌԱՋՅԱԼ, 4. ԱՐԵԱԿՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
5. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, 6. ՏԱՎՈՒՅԻ ՄԱՐԶ,
7. ԲԵԼՈՌՈՒԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 8. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 9. ՎԵՐԻՆ ԴՎԻՆ:

46

## Ո՞ր քառերն են կազմությամբ քարդ.

1. քանսարկու, 2. քանկագին, 3. գովազդատու, 4. ծիրանավառ, 5. պարտիզան,
6. հանքատեր, 7. սրտատրոփ, 8. երկարուղի, 9. ճառագայթ:

47

**Ո՞ր նախադասություններում ապակատար ձևարայ (կախյալ դերքայ) կա:**

1. Աստղը արդեն դուրս էր Եկել. մենք շուտով ճամփա էինք ընկնելու:
2. Հասկացրո՞ւ նրանց, որ մարդը ազատ պիտի լինի, որ ոչ ոք ուրիշի ազատությունը ուժահարելու իրավունք չունի:
3. Մտագրադ բափառում էր նաև խորհում, թե ինչ ելք գտնի՝ աշխարհը փրկելու համար:
4. Այն քոչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին. սակայն տեսնենք՝ ինչ է վաղը լինելու:
5. Մի անգամ այդ հրաշագեղ տաճարը տեսնելու է գնում թագավորի դուստրը:

48

**Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարրերակներից որո՞նք են սխալ:**

*Զինվորները դուրս են գալիս միահամուռ ուժերով գտած քարստոցից, սպանում են պահակազորին, բացում երկարից դարպասները:*

1. դարպասները—ենթակա
2. դուրս են գալիս—պարզ ստորոգյալ
3. գտած—որոշիչ
4. պահակազորին—ուղիղ խնդիր
5. ուժերով—ներզործող խնդիր
6. միահամուռ—ձևի պարագա

49

**Ա. Քակունցի պատմվածքների վերաբերյալ ո՞ր պնդումներում սխալ չկա:**

1. Սոնան ամուսնությունից մոտ մեկ տարի անց մահանում է: (*«Սիրիակ»*)
2. Հրաժեշտի օրը Խոնարիդ աշակերտների հետ Եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու: (*«Խոնարի աղջիկը»*)
3. Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում: (*«Սիրիակ»*)
4. Հնձվորը մահակը անասելի թափով իջեցնում է տղայի թիկունքին, որովհետև նա պահածոյի տուփ էր վերցրել անձանոթ մարդկանցից: (*«Ապիսական մամուշակ»*)
5. Ուսուցիչը մերժում է ճաշի հրավերը՝ պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը: (*«Խոնարի աղջիկը»*)
6. Պատմվածքն ավարտվում է նրանով, որ Սինոնի նայրը փորձում է միսիթարել որդուն: (*«Սպիտակ ճիմ»*)

50

**Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:**

1. Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ Պար չես բռնում մանկական...
2. Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իր եարն է փախեր...
3. Կ'ուզեմ որ դադրին ճայներն այս պատիր,  
Ու նեկտարիդ դրդն ըմպեմ ես անհագ...
4. Աստղերը լուռ կը հային Մուրին մեջ մինչև առտու.  
Նման ցավոտ սրտերու...
5. Տեղ ոսկի տեղայի ի փեսայութեանն Արտաշիսի...

## Բ մակարդակ

51

Համարակալված բառերում բաց բողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Աստիճանաբար մոռանալով խառնիճաղաճ՝(1) առօր–ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու–(3) ու տա–տկալի(4) մտքերից՝ Երեմ–ն(5) խաղաղ քուն մտավ: Ժու–կալ(6) մայրը բարեհոգի ժպիտով նայեց խա–շիկ(7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա–մարյա(8) ե–ոտանու(9) վրա դրված լաջվար–(10) զարդարութիր և դուրս եկավ սենյակից:

- 1) 2–ե, 5–յա, 6–ժ, 10–դ
- 2) 1–շ, 4–խ, 6–ժ, 7–փ
- 3) 1–շ, 3–կ, 9–ն, 10–դ
- 4) 2–ե, 4–խ, 7–փ, 8–ը

52

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) ձեռք(սեղմում), նոր(արեցի), հարավ(արևմտյան), քաջ(առողջություն)
- 2) ի(սպառ), հետ(այսու), քառասուն(յոթ), առ(այն)
- 3) տն(օրինեք), առ(միշտ), ի(հեճուկս), տարեց(տարի)
- 4) փոխ(օգնություն), ըստ(այսմ), խոսքի(մասային), ի(զուր)

53

Ո՞ր շարքի բոլոր բառազույցերն են կազմված հոմանիշներից:

- 1) խոնջանալ–սերևերել, շավիդ–կածան, կապուկ–տրցակ
- 2) կշտամբել–պախարակել, անվրեաւ–անշեղ, անսալ–լսել
- 3) հեղիեղուկ–երերուն, հեգնել–ծաղրել, անտունի–տնանկ
- 4) խրթին–մանվածապատ, անձկալի–տենչալի, շիվ–ոստյուն

54

Ո՞ր նախադասության մեջ բառազործածության սխալ չկա:

- 1) Թեև մրցակիցը ֆիզիկապես ուժեղ էր, բայց իր վարպետության պատճառով հայ մարզիկը կարողացավ հաղթել նրան:
- 2) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 3) Մարզպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
- 4) Մեծ իմաստասերը գրեց, որ տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:

55

**Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ ժամանակաձևով դրված ստորոգյալ կա:**

- 1) Սարի վրա ամապ կա. շուտով այս ամալը պիտի իջնի սարի վրայով և փովի մեր ձորերի վրա:
- 2) Չգիտեմ՝ վերարկուն ինչ արժի, որովհետև մի անգամ գնացի, որ նայեմ, խաճութը փակ էր, ցուրտ էր. վազելով հետ եկա:
- 3) Մի՛ մոռացեք երախտագիտություն հայտնել ձեզ օգնած մարդկանց:
- 4) Նրա հետևկից դուրս է գալիս մի կին՝ ինչ-որ բան շպրտելով շան կողմը:

56

**Ո՞ր տարրերակում անկանոն բայ չկա:**

- 1) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:
- 2) Դեպի արևը դարեր ու դարեր բոյիր, ալացիր, ազնիվ քարավան:
- 3) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
- 4) Ելի գարուն կգա, կբացվի վարդը:

57

**Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) **Մինչև գյուղից հեռանալը որոշեց այցելել նաև տարեց ուսուցչին:**
- 2) **Չնայած եղանակն արդեն ցրտել էր նա աշնանային թեթև հազուստով էր:**
- 3) **Այսօր ժամանակ չենք ծախսելու խնդրի լուծման այլ տարրերակների քննարկման վրա:**
- 4) **Չգիտես ինչու համոզված էի որ ամեն առավոտ հենց նույն տեղում կհանդիպեմ նրան:**

58

**Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

- 1) **Իշխանը սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից:**
- 2) **Գարնանային տաք օդը հազեցած էր հողի ու արևի զգիսիչ բուրմունքով:**
- 3) **Նա, սամույրե մեծ օձիքով մուշտակը հագին, շրջում էր Սյունիքում՝ աղետի դեմն առնելու համար միջոցներ որոնելով:**
- 4) **Այդ գիշեր, երբ ձմռան քամին սաստիկ ոռնում էր, նրա զլիսով մի միտք անցավ՝ օրագիր պահել:**

59

**Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:**

-Երկու շաբաթ է՝ քույրո չի զանգահարել,- հուզված ասաց ինձ մայրս, ապա ավելացրեց.- նեղացել է ինձնից:

- 1) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրո չի զանգահարել, ապա ավելացրեց:
- 2) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրո չի զանգահարել, ապա ավելացրեց, որ ինքը նեղացել է նրանից:
- 3) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրո չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նեղացել է նրանից:
- 4) Մայրս ինձ հուզված ասաց, ապա ավելացրեց, որ երկու շաբաթ է՝ քույրո չի զանգահարել. նեղացել է իրենից:

60

**Ո՞ր տարրերակում ենթակա ստորադաս նախադասություն չկա:**

- 1) Հետճաշյա հանգստի ժամանակ մեզ կարգադրվեց, որ հանգիստ մնանք, այս ու այն կողմ չվագենք:
- 2) Ինձ դուր էր գալիս, թե ինչպես էր նա գլխարկը ձիգ դնում գլխին և եզրերը մի քիչ վեր բարձրացնում:
- 3) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մամկության գյուղում:
- 4) Սիգուցե և լավ էր, որ նա ինձ չքողեց այդ մերենան գործի գցել ու դրանով ճամփա գնալ:

61

**Ո՞ր հատվածը Վ. Տերյանի որ բանաստեղծությունից է:**

- |    |                                     |                 |
|----|-------------------------------------|-----------------|
| ա. | Կար մի երգ հեռավոր աշխարհում,-      | 1. «Fatum»      |
|    | Դու այն երգն ես կրկնում հեռավոր-    | 2. «Դարուն»     |
|    | «Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում», | 3. «Տիրություն» |
|    | Եվ իին են քո խոսքերը բոլոր...       | 4. «Կարուսել»   |

բ. Ես ու դու ել շղթայված ենք իրարու,

Կարոտավառ երազում ենք միշտ իրար...

գ. Այնպես գգվող է երեկոն անափ,

Ծաղիկներն այնպես նազով են փակվում:

դ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,

Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

- 1) ա-4, թ-1, զ-2, դ-3
- 2) ա-3, թ-2, զ-1, դ-4
- 3) ա-4, թ-3, զ-1, դ-2
- 4) ա-3, թ-2, զ-4, դ-1

62

Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի նկարագիրն է.

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա»:

- 1) դերասանի
- 2) խմբագրի
- 3) քժշկի
- 4) բանաստեղծի

63

Նախադասություններից քանի ում ներգործական սեռի բայ կա:

- Երբ վրանի մոտ լսվեցին մոր բորիկ ոտքերի ձայնն ու զգեստի խշողը, տղան սիրտ առավ:
- Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա:
- Խարիսուլ սանդուղքով վայր իջավ, մի քանի րոպե անիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դրանը:
- Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ւր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
- Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որը փրկելու էր գյուղը:

64

Բառազույգերից քանի սեռ են կազմված հականիշներից.

ասպետական–անհյուրընկալ, հորդածուի–անջրդի, խորունկ–ծանծաղ, խորդուքորդ–ողորկ, անաշառ–կողմնակալ, աստանդական–նստակյաց, տարակարծիք–անտարակույս, գողտրիկ–բացահայտ:

65

**Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- **Այսօրվա հանգիստ պայմաններում ստեղծագործողները չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:**  
Նրանք, ովքեր ստեղծագործում են այսօրվա հանգիստ պայմաններում, չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:
- **Դերասանի արժանիքները թվարկելիս Փափազյանն առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:**  
Երբ Փափազյանը թվարկում էր դերասանի արժանիքները, առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:
- **Իմ հանցանքը արտորված ուսանողների հետ ծանոթանալս էր:**  
Այն, որ ծանոթացնել էի արտորված ուսանողների հետ, իմ հանցանքն էր:
- **Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները երկրից արտագաղթածների բազմությունը:**  
Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները այն բազմությունը, որն արտագաղթել է երկրից:

66

**Նշել այն բառերի համարները, որոնցում ածանցի հնչյունակոխություն կա.**

1. Վերնահարկ, 2. մշակութային, 3. սփոռց, 4. աշխուժանալ, 5. որկրամոլ,
6. փախատական, 7. վարչապետ, 8. վրձնահարված, 9. ժողովրդավար:

67

**Ո՞ր նախադասություններում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Թե ուր էին կորել թերահավատ նախապաշարումներս ու խոհերս որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս քաղաքի փոշոտ փողոցներում ես չեմ կարող ասել:
2. Կարելի էր տեսնել ներկարարների որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում էին ամեն գույնի ներկերի հետքեր սևից մինչև սպիտակ:
3. Պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա այնտեղ նա նրան է պարզում իր բարի ժպիտը:
4. Նա խորիրդավոր ժպիտը դեմքին դիմավորեց ամուսնուն սակայն բոլորն էլ լավ հասկանում էին թե այդ կիսն ինչ էր մտածում իրականում:
5. Իմ առջև փոված են հայրենի դաշտերը լուս խաղաղ ու հարազատ դաշտերը:

**Նշել այն մտքերի համարները, որոնք հակասում են տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:**

1943 թվականին, չունենալով ոչ սեփական կացարան, ոչ փող, Նյու Յորքի հյուրանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց մեծ ֆիզիկոս Տեսլան՝ էլեկտրատեխնիկայի պոետը: Նա կյանքից հեռացավ լուս ու աննկատ:

Նրա անվան հետ բազմաթիվ լեզենդներ ու առասպելներ են կապված: Դեռ մանկության տարիներից իր ընդունակությունների խորհրդավորությամբ նա զարմացնում անգամ վախեցնում էր իրեն շրջապատող մարդկանց: Մի անգամ նա մեծ դժվարությամբ կարողացավ տանը պահել իր հյուրերին, որոնք շտապում էին կայսրան: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ գնացքն աղետի է ենթարկվել: Նա տեսնում էր մթության մեջ...

1884 թ. Տեսլան մեկնեց Ամերիկա՝ Թումաս Էլիտոնի մոտ: Նյու Յորք հասակ՝ գրայանում ունենալով 4 ցենտ և իր նախկին գործատուի կողմից Էլիտոնին հասցեագրված մի նամակ, որում գրված էր. «Ես ճանաչում եմ երկու մեծ մարդկանց, որոնցից մեկը Դուք եք, երկրորդը՝ այս երիտասարդ»... Սնանկացած գիտնականը անգամ հրաժարվեց Նորելյան մրցանակից, որը տրվել էր իրեն և Էլիտոնին, և այն ոչ մեկին չնորիկվեց:

Տեսլան՝ 20-րդ դարի այդ ամենաառեղծվածային գիտնականներից մեկը, հավատացած էր, որ ինքն ընդունում է տիեզերքից ինչ-որ մեկի կողմից պարբերաբար հաղորդվող ազդանշաններ, որոնք մարդիկ ի վերջո կվերծանեն: Խորիելով այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու մասին՝ նա գրում է. «Հանուն պատմական այդ մեծ առաքելության, հանուն նրա, որ իրականանա այդ հրաշքը, ես իմ կյանքը կտայի»:

1. Երբ Տեսլան արդեն հայտնի էր իր գիտական մի շարք գյուտերով, ի հայտ եկան նրա՝ ապագան կանխատեսելու ունակությունները:
2. Իր մի արտառոց ունակության շնորհիվ Տեսլան մի անգամ փրկել է մարդկանց աղետի ենթարկվելուց:
3. Տեսլան առաջարկել է տիեզերքից հաղորդվող ազդանշանների վերծանման եղանակներ:
4. Նույնիսկ սնանկացած վիճակում Տեսլան հրաժարվեց Նորելյան մրցանակից, և այն շնորհվեց միայն Էլիտոնին:
5. Տեսլան պատրաստ էր կյանքը տալու՝ այլմոլորակայինների հետ կապ հաստատելու երազանքն իրականացած տեսնելու համար:

69

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Մխալ է, Զգիտես տարբերակներից որևէ մեկը:**

1. Եթե ենթական ունենում է մեկից բարձր թիվ ցույց տվող որոշիչ լրացում, ապա կարող է դրվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:
2. Ենթական և ստորոգյալը կապակցվում են համաձայնությամբ և խնդրառությամբ:
3. Բուն բացահայտիչը կարող է ինչպես հաջորդել, այնպես էլ նախորդել իր լրացյալին:
4. Բայց իր լրացումների հետ կապակցվում է խնդրառությամբ և համաձայնությամբ:
5. Շրջուն շարադասությունը համարվում է շարադասական սխալ:
6. Մասնավորող պարագայական բացահայտիչը երբեմն հոլովով համաձայնում է բացահայտյալին, երբեմն՝ ոչ:

70

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Մխալ է, Զգիտես տարբերակներից որևէ մեկը:**

1. **-քար, -պես, -որեն, -ային** վերջածանցներով կազմվում են միայն մակրայներ:
2. Մակրայները լինում են տեղի, ժամանակի, նպատակի, ձևի, չափ ու քանակի:
3. Բոլոր մակրայները նախադասության մեջ կարող են դառնալ ինչպես բայական, այնպես էլ գոյականական անդամի լրացում:
4. Միևնույն բառը կարող է լինել և՝ մակրայ, և՝ կապ՝ նայած կիրառության:
5. Բոլոր տեսակի մակրայներն ունեն իրենց փոխարինող ցուցական դերանուններ:
6. Գոյականներից արմատի կրկնությամբ կարող են կազմվել մակրայներ: